ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____» _____ 2016թ. **N _____- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ» ԾՆՆԴԱՏՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 20-րդ հոդվածներով, 67-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևանի քաղաքապետարանի ենթակայության «Սուրբ Աստվածածին» ծննդատուն փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությանը:
2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան, ապահովել «Սուրբ Աստվածածին» ծննդատուն փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման գործընթացի իրականացումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ» ԾՆՆԴԱՏՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Սուրբ Աստվածածին» ծննդատուն փակ բաժնետիրական ընկերությունը /այսուհետ՝ բուժհաստատություն/ ձևավորվել է համաձայն Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի փետրվարի 14-ի «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին» հ.398-Ա որոշմամբ՝ առանձնանալով «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունից և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ բաժանիչ (առանձնացման) հաշվեկշռին համապատասխան: Բուժհաստատությունում մատուցվում են հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայություններ՝ ինչպես վճարովի, այնպես էլ անվճար հիմունքներով:: Բուժհաստատությունում գործում են մանկաբարձական, գինեկոլոգիական, նորածնային, վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի, արյան փոխներարկման բաժանմունքներ, կլինիկաախտորոշիչ լաբորատորիա, դեղատուն: 2014 թվականի հուլիս ամսից բուժհաստատությունում գործում է նաև վիրաբուժական, ուրոլոգիական և քիթ-կոկորդ-ականջաբանական բաժանմունքեր, առողջության առաջնային պահպանման ծառայություն:

Ներկայումս բուժհաստատությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի, այդ թվում հողամասի մակերեսը՝ 3.0063 հա է, որից շենքեր, շինություններ՝ 15216.1 քմ: Անշարժ գույքը բաղկացած է 10 մասնաշենքից, սակայն շահագործվում է միայն մեկ մասնաշենքը, որը վերանորոգվել է 2009 թվականին Հայաստանի Համահայկական հիմնադրամի կողմից և գտնվում է բարվոք վիճակում: Մյուս մասնաշենքերը գտնվում են ոչ բարվոք վիճակում և չեն շահագործվում՝ կոմունալ և այլ ծախսերի կրճատման նպատակով:

Բուժհաստատության սարքավորումների մեծ մասը արտադրվել են դեռևս խորհրդային տարիներին, որոնք հնարավորություն չեն ընձեռում մատուցել ժամանակակից պահանջներին համապատասխան բուժսպասարկում:

Հիմք ընդունելով բուժհաստատության տեխնիկական հագեցվածության աստիճանը՝ ՀՀ առողջապահության նախարարի 28.12.2012թ հ.3143-Ա հրամանով հաստատված «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնության կազմակերպմանե չափորոշիչով «Սուրբ Աստվածածին ծննդատուն փակ բաժնետիրական ընկերությունը դասակարգվել է որպես 2-րդ մակարդակի բուժհաստատություն: Այսինքն՝ բուժհաստատությունում մատուցվում է մասնագիտական մանկաբարձա-գինեկոլոգիական օգնություն նորմալ, միջին և բարձր ռիսկի խմբերի հղիների համար, որոնց նորածինները չեն պահանջում հատուկ, նեղ մասնագիտացված հետազոտում և բուժում: Պայմանավորված նշված հանգամանքներով՝ հղիների մեծ մասը գերադասում է ծննդալուծվել այն բուժհաստատություններում, որտեղ մատուցվում են նեղ մասնագիտացված մանկաբարձագինեկոլոգիական ծառայություններ, հատկապես այն դեպքում, երբ վարչական շրջանի տարածքում գործում է մեկ 3-րդ մակարդակի բուժհաստատություն և մեկ տեխնիկապես հագեցած 2-րդ մակարդակի բուժհաստատություն: Այսինքն՝ ազգաբնակչության առավել վճարունակ հատվածը գերադասում է նմանատիպ նեղ մասնագիտացված բուժհաստատություններում մատուցվող բարձրորակ ծառայությունները:

Վերը նշվածով պայմանավորված՝ բուժհաստատությունում վերջին տարիներին անընդհատ արձանագրվում է ծնունդների թվաքանակի անկում: Այսպես՝ 2010 թվականին ծնունդների թիվը կազմել է 1596, 2011 թվականին՝ 1361, 2012 թվականին՝ 1036, 2013 թվականին՝ 761, 2014 թվականին՝ 562, 2015 թվականին՝ 415: 2010 թվականի համեմատ

ծնունդների թվաքանակը 2015 թվականին նվազել է շուրջ 74%-ով: 2016 թվականին 11 ամսում ծնունդների թիվը կազմել է 263, իսկ 2016 թվականի համար կանխատեսվում է շուրջ 280 ծնունդ: Ծնունդների նման թվաքանակի պայմաններում հնարավոր չի ապահովել ինքնաձախսաձածկումը: Արդյունքում՝ 2013 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործնեության արդյուքում ստացված 6200.0 հազար դրամ զուտ շահույթի դիմաց, 2015 թվականին՝ ֆինանսատնտեսական գործնեության արդյունքում ստացվել է 17100.0 հազար դրամի վնաս: 2016 թվականի 9 ամսում ընկերության ֆինանսատնտեսական գործունեության արդյուքներով վնասը կազմել է 11207.0 հազար դրամ:

Ֆինանսական դժվարությունները հանգեցրել են կրեդիտորական պարտքերի գոյացմանը, ինչն էական դժվարություններ է առաջացնում բուժհաստատության ինչպես ընթացիկ գործունեության, այնպես էլ՝ հեռանկարային զարգացման ապահովման համար: Այսպես՝ 01.01.2014թ. դրությամբ բուժհաստատության կրեդիտորական պարտքը կազմել է 18330.7 հազար դրամ, 01.01.2015թ. դրությամբ՝ 12581.5 հազար դրամ, իսկ 01.01.2016թ. դրությամբ՝ 15073.5 հազար դրամ: 01.11.2016թ դրությամբ բուժհաստատության կրեդիտորական պարտքը կազմել է 20693.1 հազար դրամ, որից 4767.6 հազար դրամը՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների գծով: Արդյուքնում տեղի է ունեցել կադրերի արտահոսք:

Այս պայմաններում ակնհայտ է դառնում, որ բուժհաստատությունը չունի համապատասխան ֆինանսական և կադրային ռեսուրսներ ազգաբնակչությանը անհրաժեշտ ծավալի և որակի բժշկական ծառայություններ մատուցելու, ինչպես նաև սեփական ռեսուրսներով զարգանալու համար, ուստի անհրաժեշտ է այն վերակազմակերպել՝ այլ բուժհաստատության հետ միացման ճանապարհով:

Հաշվի առնելով «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կադրային ներուժը, ֆինանսատնտեսական վիճակը, տեխնիկական հագեցվածությունը, ինչպես նաև, ուսումնասիրելով բժկական կենտրոնի կազմում ծննդատան գործնեության ցուցանիշների դրական միտումը, նպատակահարմար ենք գտնում «Սուրբ Աստվածածին» ծննդատուն փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությանը:

Հանդիսանալով բժշկական կենտրոն, որը մատուցում է լայն ծավալով հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայություններ՝ «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունը կարող է ներգրավել համապատասխան կադրային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ: Արդյունքում կբարձրանա ծննդաատանը մատուցվող ծառայությունների որակը:

Անձնակազմի կրճատում և տարածքի օտարում չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ» ԾՆՆԴԱՏՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Սուրբ Աստվածածին» ծննդատուն փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ» ԾՆՆԴԱՏՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ » ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Սուրբ Աստվածածին» ծննդատուն բաժնետիրական ընկերության վերակազմակերպման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ